REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF CULTURE
<<CULTURAL PROJECTS
IMPLEMENTATION UNIT>>
STATE AGENCY

ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО КУЛЬТУРЫ
<<БЮРО ПО РЕАЛИЗАЦИИ
КУЛЬТУРНЫХ ПРОГРАММ>>
ГОСУДАРСТВЕННОЕ
УЧРЕЖДЕНИЕ

02.04.14 N 129-14

Ձեր N ___ առ

ՀՀ, ք. Երևան, 0010 Հանրապետության հրապարակ, Կառավարական 3 տուն
РА, Ереван, 0010 площадь Республики, Дом правительства N3
Government Building N 3, Republic square, 0010, Yerevan, Republic of Armenia
Tel: (+37410) 58 51 96, 58 51 78, Fax: (+37410) 58 51 96 E-mail: c-project@mail.ru

**«ԳԱԿ-ԾՀԾՁԲ-11/9» ծածկագրով**
**շրջանակային համաձայնագրերի միջոցով**
**գնում կատարելու ընթացակարգի հնարավոր**
**մասնակիցների ղեկավարներին**

Հարգելի մասնակից

«ԳԱԿ-ԾՀԾՁԲ 11/9» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ՀՀ մշակույթի նախարարության «Մշակութային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ծառայություն՝ **սարքերի և սարքավորումների վերանորոգում**

Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում N «ՀՀՄՆՄՇԻԳ- ԾՀԾՁԲ -14/66»:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով մինչև 2014 թ. ապրիլի 14-ին, ժամը 15:00

Հայտերը կբացվեն www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով 2014 թ. ապրիլի 14-ին, ժամը 15:00: Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը /հավելված N 1 և N 2/: Ընթացակարգին մասնակցելու համար մասնակիցը կայքի միջոցով ներկայացնում է հայտ: Հայտին կցվում են սույն հրավերով նախատեսված համապատասխան փաստաթղթերը / հավելվածներ/՝ հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված /սկանավորված /տարբերակով:

Մասնակիցը Հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված՝

**«Որակավորման չափորոշիչ»**.

ընթացակարգին մասնակցելու դիմում՝ Հավելված N 1/,ընդ որում պարտադիր է նշել մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն.

-**«ֆինանսական չափորոշիչ»**.

գնային առաջարկ /Հավելված N 2/, որը ներկայացվում է **ինքնարժեք** և ավելացված արժեքի հարկ բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով մեկ թվով՝ և **կայքում պարտադիր լրացվում է առանց Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի հաշվարկման: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և չեն ներկայացվում**

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ԾՀԾՁԲ 11/9» ընթացակարգի հրավերով սահմանված կարգով

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

**Եթե**, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և / կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և / կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և / կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ 7)-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

-**նման փաստաթղթերի** և / կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները.

- նման պահանջի դեպքում մասնակիցներից պահանջվող փաստաթղթերի ցանկը և փաստաթղթերը, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցմամբ)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և / կամ տվյալները

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը և գնային առաջարկով ներկայացվելիք փաստաթղթերի օրինակելի ձևերը

Տնօրեն Ե. ՆԵՐԱՆՅԱՆ